ՈՒՂԵՐՁ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՔՎՈՐՈՒՄԻ ԱՆԴԱՄԻ ԿՈՂՄԻՑ

Քավության պարգևը

Նախագահ Ռանդալ Քիմ Բենեթ, ԱԵՏ 1-ին խորհրդական

Հիսուս Քրիստոսի քավությունը ոչ միայն ամենանշանակալից ու կարևոր գործողությունն է պատմության մեջ, այլ հրաշալի պարգև մեր սիրող Երկնային Հոր և Նրա Միածին Որդու կողմից: Նախագահ Գորդոն Բ. Հինկլին սովորեցրել է. «Երբ ամեն ինչ արդեն ասվել և արվել է, երբ ամբողջ պատմությունն ուսումնասիրվել է, երբ հետազոտվել են մարդկային մտքի անծայր խորքերը, ոչինչ չկա այդքան հրաշալի, այդքան վսեմ, այդքան մեծ, որքան այս շնորհն է» (Նախագահ Գորդոն Բ. Հինքլի, Առաջին Նախագահության Սուրբ Ծննդյան հավաք, դեկտեմբերի 4, 1994թ.):

Երեց Բրյուս ՄակՔոնկին գրել է. «Փրկության ողջ ծրագրում չկա ոչինչ, որ իր կարևորությամբ կարող է ինչ-որ կերպ համեմատվել բոլոր իրադարձություններից գերազանցող՝ մեր Տիրոջ քավող զոհաբերության հետ: Դա ամենակարևոր, այն եզակի երևույթն է, որ երբևէ տեղի է ունեցել արարման ամբողջ պատմության մեջ, դա հիմնաքարն է, որի վրա են հիմնված ավետարանն ու մնացած բոլոր բաները» (Երեց Բրյուս ՄակՔոնկի, Մորմոնական վարդապետություն, 60):

Մեր Փրկչի քավող զոհաբերությունը սիրա հոժար ու կամավոր զոհաբերություն էր, դրդված Նրա կատարյալ, մաքուր ու անվերապահ սիրուց Իր Հոր և մեզանից յուրաքանչյուրի հանդեպ: Մեր Երկնային Հոր պատրաստակամությունը՝ թույլ տալու, որ Իր Անդրանիկ Որդին տանջվի, արյունահոսի ու մահանա մեզ համար, ինչպես նաև մեր Քավչի հոժարակամ քավող զոհաբերությունը ամբողջ պատմության մեջ սիրո ամենամեծ դրսևորումներն են:

Նրա Քավության շնորհիվ մենք բոլորս անվերապահորեն կստանանք հարության ու անմահության պարգևը՝ հավերժ ապրելու փառավորված, հարություն առած մարմիններով: Հիսուս Քրիստոսի Ավետարանին հավատարիմ ապրելով և մեր սեփական կյանքում ապաշխարության հրաշալի պարգևը կիրառելով մենք հնարավորություն կունենանք կրկին ապրելու մեր Երկնային Հոր հետ որպես հավերժական ընտանիքներ:

Մենք՝ յուրաքանչյուրս, մեր երախտագիտությունն ենք ցույց տալիս մեր Երկնային Հորը և մեր Փրկչին, երբ պատրաստակամորեն ծառայում ենք մեր եղբայրներին ու քույրերին: Ինչպես ուսուցանել է Երեց Ռասսել Մ. Նելսոնը. «Ահա թե ինչու ենք մենք արձագանքում Տիրոջ կողմից տրվող կոչումներին: Երբ հասկանում ենք Նրա հոժարակամ Քավությունը, զոհաբերելու մեր զգացումը ստվերածածկ է լինում Նրան ծառայելու մեզ տրվող արտոնությունից ծնվող երախտագիտության մեծ զգացումով» (Երեց Ռասսել Մ. Նելսոն, Գերագույն Համաժողով, հոկտեմբեր 1996թ.):

Վարդապետին հարցրեցին. «Ո՞ր պատվիրանքն է մեծ օրենքումը»: Հիսուսը պատասխանեց. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը: Սա է առաջին և մեծ պատվիրանքը»: Ապա Նա ավելացրեց. «Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս» (Մատթէոս ԻԲ.36-39):

Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու, ինչպես նաև մեր եղբայրների ու քույրերի հանդեպ մեր սերը, դրդում է մեզանից յուրաքանչյուրին պատրաստակամ, ուրախությամբ ու սիրով դառնալ փրկության ծրագրի մասնակիցն ու աջակիցը: Մեր սերը Աստծո և մեր մերձավորների հանդեպ ջերմեռանդ ներգրավվածություն կառաջացնի մեր մեջ, որ օգնենք մեր մերձավորներին վայելելու Հիսուս Քրիստոսի Ավետարանի օրհնությունները:

Մեզանից յուրաքանչյուրը մեծ ուրախություն կզգա պատրաստակամորեն ծառայելով Աստծուն և Նրա զավակներին: Առաջին Նախագահությունը խոստացել է. «Տերը կհատուցի և առատորեն կօրհնի ձեզ, եթե խոնարհաբար և ջերմեռանդորեն ծառայեք Նրան: Ավելի մեծ երջանկություն է սպասում ձեզ, քան դուք երբևէ ունեցել եք, երբ ջանքեր

թափեք Նրա զավակների շարքերում» (Առաջին Նախագահության Ուղերձ, Քարոզեք Իմ Ավետարանը)։

Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է, Սուրբ Մեսիան։ Նա մեր Փրկիչն ու Քավիչն է։ Նա իրոք ճանապարհն է, ճշմարտությունը, Կյանքը և Աշխարհի Լույսը։ Ի դեպ, Նա միակ ճանապարհն է «և չկա ոչ մի այլ ճանապարհ, ոչ էլ անուն երկնքի տակ տրված, որով մարդ կարողանա փրկվել Աստծո արքայությունում» (2 Նեփի 31.21)։

Եկեք միշտ երախտապարտ լինենք մեր Երկնային Հորն ու մեր Փրկչին Նրա քավության համար, նրանց մաքուր, կատարյալ, անվերապահ և անսահման սիրո համար։ Եկեք յուրաքանչյուրս ցույց տանք մեր սերը մեր Երկնային Հոր և մեր Փրկչի հանդեպ, սիրելով և ջերմեռանդորեն ծառայելով մեկս մյուսին։ ■

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2015թ. ընտանեկան երեկոների շաբաթական օրացույց

Տարածքի նախագահությունը դրական արձագանք է ստացել 2014թ. ընտանեկան երեկոների շաբաթական օրացույցի վերաբերյալ, որը տպվել և տարածվել է մեր բոլոր ընտանիքներին հունվար և փետրվար ամիսներին։ Այդ օրացույցը գաղափարների լավ նյութ է հանդիսացել և գեղեցիկ հիշեցում այն մեծ օրհնությունների մասին, որոնք գալիս են ծնողներին և երեխաներին ընտանիքներում, որտեղ կանոնավոր անց են կացվում երկուշաբթի օրվա այս երեկոյան հավաքները։

Որոշում է կայացվել այս տարի ևս շարունակել այդ տեսողական օժանդակ նյութի հրապարակումը՝ որոշ փոփոխություններով։ Այս անգամ այն լույս կտեսնի շաբաթվա պլանավորման նյութի տեսքով, կտրվեն գաղափարներ տարվա յուրաքանչյուր երկուշաբթի երեկոյի համար, այդ թվում՝ հոգևոր միտք, սուրբգրքյան մեջբերումներ, ընտանեկան խաղի կամ միջոցառման առաջարկներ և խոհարարական բաղադրատոմս։

Էջերի մեծ քանակը և տպագրական ծախսերը հաշվի առնելով, 2015թ. ընտանեկան երեկոների շաբաթական օրացույցը առաջարկվում է ոչ թե տպագիր, այլ էլեկտրոնային երկու ձևաչափերով. 1) pdf ձևաչափով, որը դուք կարող եք ներբեռնել ձեր համակարգիչ կամ շարժական կապի սարք և տպել էջ առ էջ, եթե ցանկանում եք, և 2) առցանց տարբերակով։ Հատուկ ձևավորված վեբ կայքը հասանելի կլինի բոլորին համակարգչից կամ շարժական կապի սարքից։

Pdf-տարբերակը ներբեռնելու կապուղին կամ «2015թ. ընտանեկան երեկոների շաբաթական օրացույց» կապուղին կարելի է գտնել LDS.ru վեբ կայքում։

Ինչպես անցյալ տարի, խորհուրդ է տրվում հատուկ ժողով անցկացնել բոլոր չափահաս անդամների համար, ներկայացնելով Օրացույցը և քննարկելով շաբաթական ընտանեկան երեկոներ անցկացնելու կարևորությունը։

Օրացույցը մատչելի է անգլերեն, բուլղարերեն, էստոներեն, լատվիերեն, լիտվերեն, հայերեն, ռուսերեն և ուկրաիներեն։ ■

Հայերեն Օրացույցի կազմը

Բարության 1000 ժամ

Գրազինա Մատոնիենե, Բալթյան Միսիա

Հրաշալի է՝ միասին ծառայել

Ծառայության մեծ, հետաքրքիր նախագիծ սկսվեց անցյալ տարի՝ գարնանը Բալթյան Միսիայի Լիտվական թաղամասում: Այն համախմբեց շատ մարդկանց ջանքերը, ինչպես Վիլնյուսի եկեղեցու անդամների, այնպես էլ նրանց, ովքեր պարզապես ցանկանում էին ծառայել մերձավորներին:

Ամեն ինչ սկսվեց միսիոներական զույգի՝ երեց և քույր Սյուիսների գաղափարից. վերմակներ կարել մանկատների երեխաների համար: Այդ գաղափարը դուր եկավ Սփոփող Միության քույրերին, և հանդիպումներ էին կազմակերպվել մի քանի մանկատների ղեկավարների հետ, որպեսզի տեղեկություն ճշտվեր՝ նրանց կոնկրետ կարիքների մասին: Պարզվեց, որ սկզբնական շրջանում հարկավոր էր կարել 135 վերմակ: Այնուհետև աստիճանաբար լուծվեցին կազմակերպչական հարցերը, կապված կտորների, թելերի և վերմակների պարունակության գնման հետ: Այս հարցում օգնություն ցուցաբերեցին կամավորները և եկեղեցու մարդասիրական ծառայությունը: Բացի այդ, պատրաստվել էին հատուկ շրջանակներ, որոնք անհրաժեշտ էին կարի համար: Այստեղ օգտակար եղան եղբայրների հմուտ ձեռքերը: Առաջին շրջանակը պատրաստեց եղբայր Ալվիդաս Վայթկեվիչյուսը Վիլնյուսի առաջին ծխից, այնուհետև այդ գործը շարունակեց երեց Սյուիսը:

Ծրագրի իրականացումը սկսեցին քույրերը, հետո նրանց միացան եղբայրները, երիտասարդությունը, տարբեր տարիքի երեխաները, միսիոներները, անգլերենի խմբակի մասնակիցները, նրանց ընկերներն ու հարազատները: Որոշ քույրեր ծրագրի ընթացքում կարել սովորեցին: Երիտասարդ կանայք սովորեցին կտորի տարբեր շերտերից գնդակներ պատրաստել:

Այնտեղ, ուր աշխատանքը եռում էր, հրաշալի ոգի էր, մարդիկ շփվում էին, երգում էին օրհներգերի մեղեդիները և ուրիշ սիրված երգեր, վայելում էին շփումը և հաճելի մթնոլորտը, որը միշտ է առաջանում, երբ մի լավ ու բարի աշխատանք է կատարվում: Դժվարություններ նույնպես առաջանում էին: Անհրաժեշտ էր դառնում աղոթել, փնտրել հանգուցալուծման տարբերակներ, խորհրդի և օգնություն համար դիմել տարբեր մարդկանց, և դժվարությունները հաղթահարվում էին, հիշողության մեջ թողնելով օգտակար հոգևոր փորձը և ծանոթությունը բարի ու պատրաստակամ մարդկանց հետ:

Մինչև Նոր Տարի կարվեց 203 վերմակ. գունագեղ, պայծառ ու տաք: Դրա համար հարկավոր եղավ 1000 աշխատանքային ժամ, բարություն, սեր, ուրախություն, բարեկամության անկեղծ

Երիտասարդ օգնողները

Ահա՛ և նվերները

Մեզ միշտ հարկավոր է եղբայրների օգնությունը

դրսևորումներ: Վերմակներից բացի, նվիրեցինք նաև գնդակներ: Դժվար էր ասել, թե ովքեր էին ավելի երջանիկ՝ նվիրողները, թե ստացողները: Մի մանկատան երեխաները, ովքեր ստացան նվերները, հնարավորություն էին ունեցել ինքնուրույն կարելու վերմակներ մի ուրիշ մանկատան երեխաների համար: Նվերներ մատուցելու օրը բոլորի համար ակնհայտ էր, որ բարությունն այս աշխարհում ավելացել է: Ի դեպ, վերմակներ կարելու ծրագիրը շարունակվում է: ■

Նվիրելու երջանիկ պահերը

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինքնաապահովման Կենտրոնը

Հիսուս Քրիստոսի ՀՕՍ եկեղեցում գործում է Ինքնաապահովման Կենտրոն, որը գտնվում է Խորենացի 24 հասցեյով, աշխատանքային ժամերն են՝ 13:00–16:30:

Ինքնաապահովման Կենտրոնը կարող է օգնել ձեզ՝ ձեր կարիերայի նպատակներին հասնելու հարցում: Գրասենյակը առաջարկում է անհատական վերապատրաստումներ, կարիերայի դասընթացներ, որոնք կօգնեն ձեզ գրել պատշաճ ինքնակենսագրություններ (ռեզյումեներ), նաև պատրաստ լինել՝ աշխատանքի համար անցկացվող հարցազրույցներին: Կենտրոնում առկա է աշխատանքի, կրթության վերաբերյալ տվյալների բազա: Ինքնաապահովման կենտրոնը կոչված է օգնելու եկեղեցու անդամներին գտնել աշխատանք, տրամադրելով այնտեղ առկա միջոցները, այն է՝ համակարգիչներ և համացանց, աշխատանքի որոնման կայքեր, խորհրդատվություն և կենտրոնի աշխատակիցների և կամավորների աջակցությունը՝ ինքնակենսագրություն կազմելու և տպելու հետ կապված: Եկեղեցու այն անդամները, որոնք աշխատանք են փնտրում, կարող են ներգրավվել խմբերի մեջ, հատուկ դասընթացների շրջանակներում՝ միմյանց աջակցելու և ուղղորդելու, ջանքերը համակարգելու և թափուր աշխատատեղերի մասին տեղեկություններով փոխանակվելու նպատակով գրասենյակի աշխատակիցների և կամավորների աջակցության ներքո:

Եկեղեցու անդամները կարող են այցելել Ինքնաապահովման Կենտրոն կամավոր աշխատանքներ կատարելու համար՝ իրենց և այլ անդամների համար աշխատանք փնտրելու և աջակցելու նպատակով: Դա կարող են լինել հետևյալ աշխատանքները. օգնել այն անդամներին, որոնք չունեն համակարգչային գիտելիքներ, զանգահարել և աջակցություն ցուցաբերել աշխատանք փնտրող անդամներին, համակարգչային դասեր դասավանդել: Կենտրոնում կամավորների կողմից պարբերաբար անց են կացվում համակարգչային դասընթացներ: Ցանկացողները կարող են դիմել Կենտրոն և ներգրավվել այս աշխատանքին: Եկեղեցու անդամները, ովքեր ցանկանում են մասնակցել համակարգչային դասընթացներին, կարող են դիմել իրենց Ծխերի կամ Ճյուղերի ինքնաապահովման մասնագետներին կամ գրանցվել Ինքնաապահովման Կենտրոնում:

Եկեղեցու երիտասարդ անդամներին կարող է տրվել ապագա մասնագիտություն ընտրելու խորհրդատվություն: Կենտրոնում առկա է նախընտրելի ուսումնական հաստատությունների ցանկ, որոնց շրջանավարտների (համապատասծան որակավորում ունեցող մասնագետների) պահանջարկը կա երկրում: ■

Տաճարային ուղևորություն դեպի Կիև

Հասվիրա Մինասարյան Երևան ճյուղ, Երևան Հայաստան ցից

Մենք տաճարային ուղևորություն կատարեցինք դեպի Կիև՝ 2014թ. դեկտեմբերի 8-ից մինչև 13-ը: Այս անգամ տաճարային այցելությունը շատ առանձանհատուկ էր ինձ համար, որովհետև ստիպված էի հաղթահարել մի շարք խոչընդոտներ, որպեսզի գնայի, քանի որ մայրիկիս էի խնամում

և չգիտեի, թե ում խանմքին թողնեի նրան: Բայց աղոթքն ու խոնարհությունը կատարեցին հրաշք: Տերը սրտեր փափկացրեց, մարդկանց ապահովեց, ովքեր կատարեցին հիանալի աշխատանք և գերազանց խնամք և հոգատարություն ապահովեցին մայրիկիս համար մինչ իմ վերադարձը:

Իմ զգացողությունները Կիևում շատ խաղաղ էին: Ես վայելում էի տաճարային ծառայության հրաշալի զգացողությունը, տաճարային երկրպագության հրաշքը, զգում՝ Աստծո և հրեշտակների մոտիկությունը և նրանց ժպիտները: Բոլոր ծառայողներն այնքան մեծ սիրով և պատրաստակամությամբ էին անում իրենց ծառայությունը, որ չէի ուզում դուրս գալ և հյուրանոց գնալ: Այս անգամ ես հասկացա սելեստիալ փառքի մեծությունը, քանի որ տաճարն Աստծո տունն է և երբ մտնում ենք տաճար՝ մտնում ենք Աստծո ներկայության մեջ: Ամեն անգամ, երբ տաճարից վերադառնում եմ, ես զգում եմ կարոտ իմ Երկնային Հոր հանդեպ, Նրա ներկայության հանդեպ: Շատ զոհ եմ սիրո և ուշադրության այն մթնոլորտից, որ կար խմբի մարդկանց մեջ, և կար այն հանդուրժողականության և խաղաղության հոգին, որ տիրում էր մեր մեջ:

Վերջին օրը տեղի ունեցավ վկայության ժողով և բոլոր անդամները բերեցին իրենց վկայությունները տաճարի մասին: Գիտեմ, որ Աստծո տուն մտնելուց հետո շատ բաներ են փոխվում մեր մեջ, մեր սրտերում և հոգիներում: Վերադառնում ենք տուն՝ զինված Աստծո սիրով և Նրա փառաբանության հոգով: Մարդկանց հոգևոր առաջընթացն արագանում է և մարդիկ սովորում են այն, ինչ ոչ մի ուրիշ տեղ չեն կարող սովորել: Կարծում եմ, տեղի ունեցան հրաշքներ այն մարդկանց հետ, ովքեր հիվանդ էին, նրանք բժշկված և հաստատված վերադարձան տաճարից: Ապաքինման և բժշկության հոգին զգացվում էր արարողությունների ժամանակ. ինչպես ծառայողն էր օրհնվում, այնպես էլ՝ ծառայություն ստացողը: Փառքը թող լինի Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, քանի որ նրանց ողորմածությունն է մեզ փրկում, չնայած մեր թուլություններին և տկարություններին: ■

Ուղևորության մասնակիցները

Միսիոներների Սուրբ Ծննդյան Ծրագիրը

Քույր Դայան Քարլսոն, Հայաստան
Երևան միսիայի նախագահի կինը

2014թ. դեկտեմբերի 17-ին Հայաստան Երևան միսիայում ծառայող միսիոներները այցելեցին հատուկ կարիքներ ունեցող երեխաների մի մանկատուն: Այցից առաջ միսիոներները իրենց մանր գումարներով դեղատնից երեխաների համար տակդիրներ էին գնել: Տակդիրները զբաղեցրեցին տոնածառի ստորին մասը, տարածվելով հատակի վրա: Մյուսների աջակցությամբ 110 երեխաների համար նաև տաք տաբատներ գնվեցին:

Երբ տեղ հասանք, բոլորս նստեցինք հատակին և սկսեցինք սպասել, թե երբ երեխաները սենյակ կմտնեին: Նրանք մեկը մյուսի ետևից ներս վազեցին և շարվեցին Սուրբ Ծննդյան տոնածառի դիմաց՝ հայտարարելու իրենց անունները, արտասանելու բանաստեղծություն կամ երգ երգելու, կամ ասելու այն, ինչ ցանկանում էին ասել: Բոլորս ծափահարում էինք, երբ հերթական երեխան ելույթ էր ունենում և ոգևորվում, երբ իրեն գովում էին:

Մենք անմիջապես հասկացանք, թե որքան շատ էր մեր Երկնային Հայրը սիրում նրանց: Մենք նույնպես սեր զգացինք յուրաքանչյուրի հանդեպ: Սերը ակնհայտ էր և, կարծես, լցրել էր սենյակը: Երեխաները և միսիոներները փայլում էին: Այնուհետև մենք շրջան կազմեցինք և պարեցինք տոնական մի պար: Երեխաները այնքան ոգևորված էին, ձեռքով տանում էին մեզ շրջանով մեկ, բոլորս պարում և երգում էինք: Երբ երաժշտությունը դադարեց, երեխաները նստեցին և միսիոներները մի քանի երգ երգեցին, ապա բաժանեցին նրանց գեղեցիկ և տաք տաբատները:

Երեխաներից մի քանիսը չէին կարողանում խոսել, ոմանք էլ փոքր ինչ ամաչկոտ էին, սակայն նրանց ոգևորությունը և մեծագույն ուշադրությունը արտացոլում էին նրանց երախտագիտությունն ու սերը: Մենք զգում էինք, թե որքան անարատ և հատուկ էր այդ երեխաներից յուրաքանչյուրը, և այնքան շատ էինք ուզում, որ նրանք լավ Սուրբ Ծնունդ ունենային և առողջ լինեին: Մենք աղոթում էինք, որ նրանցից յուրաքանչյուրը կարողանար զգալ Երկնային Հոր սերը իր հանդեպ և իր յուրահատուկ

լինելը: Մենք շատ երախտապարտ և արտոնված էինք մեզ զգում, մասնակցելով մանկատան այդ Սուրբ Ծննդյան տոնին, և դա մի փորձառություն էր, որը մեզանից ոչ մեկը չի մոռանա: ■

Երեխաները երջանիկ են. նրանք երբեք չէին տեսել այսքան շատ Սանտա Կլաուսների

Կլոր սեղան. Խոսենք ճշմարիտ դարձի գալու մասին

Մենք՝ եկեղեցու անդամներս, մեր կյանքում ջանքեր ենք գործադրում, որ իսկական հավատք ձեռք բերենք և դառնանք Քրիստոսի աշակերտները, սակայն հասկանում ենք, թե որքան դժվար է դա իրականացնել: Նախագահ Հենրի Բ. Այրինգն ասել է. «Մարդիկ պետք է շատ բան փոխեն իրենց կյանքում, որպեսզի մտածեն, զգան և վարվեն այնպես, ինչպես դա անում են Հիսուս Քրիստոսի ճշմարիտ դարձի եկած աշակերտները: Մեզանից յուրաքանչյուրը ձգտում է սրտի այդպիսի հզոր փոփոխության: Երբ հասնում ենք դրան, մենք պետք է հետամուտ լինենք, որ այդ փոփոխությունը չդադարի մինչև այս երկրային փորձաշրջանի ավարտը» (Լիահոնա, փետրվար 2015թ., էջ 4): Մեր խնդիրն է՝ հասցնել այս ճանապարհին որքան հնարավոր է շատ բան անել: Ինչպե՞ս հասնել դրան: Այդ մասին «Կլոր սեղանի» շուրջ մտածում են Ժիտոմիրի, Դնեպրոպետրովսկի, Ֆրոդորովկայի և Սիմֆերոպոլի փոքր ծխերի նախագահները:

Խմբագրություն. Ի՞նչ ենք հասկանում, ասելով «ճշմարիտ դարձ դեպի հավատք» կամ «սրտի փոփոխություն»:

Եվգենի Մաքսիմով (Ժիտոմիր). Երբ մարդը որոշում է կայացնում հետևել Հիսուս Քրիստոսին և պահել Նրա պատվիրանները, նա առաջին քայլն է կատարում՝ դեպի Երկնային Հոր մոտ տանող ճանապարհին: Այնուհետև, որպեսզի շարունակի առաջանալ այդ ճանապարհով, նա պետք է զգա սրտի փոփոխություն, որը տեղի է ունենում, երբ նա իր կյանքը համապատասխանեցնում է Աստծո կամքին: Ճշմարիտ դարձի գալը՝ դա կյանքի տևողությամբ մի ընթացք է, երբ մենք անընդհատ սրբագործում ենք մեր սիրտը, իսկ դա տեղի է ունենում, քանի դեռ մենք ապրում ենք ըստ ավետարանի և անկեղծ սրտով ապաշխարում մեր մեղքերից:

Եվգենի Մաքսիմովը

Կոնստանտին Անդրուսսկի (Սիմֆերոպոլ). Վկայությունը՝ մեր դարձի գալու հիմքն է: Հնարավոր չէ իսկապես դարձի եկած լինել դեպի ավետարանը, չունենալով գիտելիք և ամուր հոգևոր հավաստում: Հնարավոր չէ մտերիմ հարաբերություններ պահպանել Աստծո հետ, եթե մենք ամեն օր չենք աշխատում մեր վկայությունն ամրացնելու ուղղությամբ: Ես գիտեմ, որ եթե մենք հիշենք Հիսուս Քրիստոսի օրինակի մասին և հետևենք Նրան, ապա լիարժեք դարձի եկած կլինենք:

Կոնստանտին Անդրուսսկին

Սերգեյ Կամենև (Դնեպրոպետրովսկ). Երկնային Հայրն ակնկալում է մեզանից, որ մենք ոչ միայն ինքներս կքայլենք կատարելության ճանապարհով, այլ նաև կօգնենք նրանց, ովքեր մեր կողքին են: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի վերականգնված եկեղեցում յուրաքանչյուրն ունի կատարելագործվելու հնարավորություն, ինչպես նաև եղբայրներին ու քույրերին ծառայելու միջոցով՝ օգնելու նրանց կատարելության ճանապարհին, օգնելու այնքան, մինչև որ բոլորս «հաղորդակից լինենք աստվածային բնությանը» (Բ Պետրոս 1.4): Սա մեծ օրհնություն է՝ աշխատել այս «այգում»:

Սերգեյ Կամենև

Խմբագրություն. Ինչպիսի՞ն է եղել դարձի գալու ձեր ճանապարհը

Ս.Կ. Այդ ընթացքն իմ դեպքում եկեղեցի գալուց շատ ավելի առաջ էր սկսվել: Սկզբում Հոգին դրդեց ինձ հրաժարվել ծխելուց և ոգելից խմիչքներ օգտագործելուց: Հետո ես սկսեցի հետևել իմ խոսելաոճին և ազատվեցի հայհոյական բառերից: Ընթացքն այդ շարունակվեց հետևյալ հարցերի պատասխանների փնտրտուքով. «ո՞վ եմ ես» և «ինչո՞ւ եմ ապրում երկրի վրա»:

Կ.Ա. Իմ ճանապարհը դեպի Տիրոջ եկեղեցին նմանատիպ է եղել, ինչ եկեղեցու անդամներից շատերինը: Ես իմացա ավետարանի ճշմարտությունն աղոթքի ու սուրբ գրությունների ուսումնասիրման միջոցով և վկայություն ձեռք բերեցի Սուրբ Հոգու ազդեցության շնորհիվ: Որոշ ժամանակ ես ապրում էի անցյալում ձեռք բերված վկայություններով, բայց հետո հասկացա, որ հիմնովին կանգ եմ առել դարձի գալու ճանապարհին: Ավելի ուշ եկավ հասկացողությունը, որ մենք չենք կարող լիարժեք դարձի գալ, եթե չենք նորացնում մեր վկայություններն ամեն օր: Կապ չունի, թե երբ ենք մենք զգացել սրտի փոփոխությունը. արդյոք եղել է դա 20 տարի առաջ, թե ընդամենը՝ 1 տարի: Կարևոր է, թե ինչ ենք մենք զգում ներկա պահին: Ինչպես ասել է հնում մարգարե Ալման. «Եթե դուք զգացել եք սրտի մի փոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը, ես կկամենայի հարցնել, այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում» (Ալմա 5.26): Այս հարցը պետք է կամերտոնի նման միշտ հնչի մեր մեջ:

Խմբագրություն. Ի՞նչն է օգնել և օգնում ձեզ դարձի գալու ընթացքում առաջ շարժվել, չկանգնել տեղում

Ե.Մ. Աստված ծրագիր ունի մեզանից յուրաքանչյուրի համար: Մենք երկիր ենք եկել մեր անկատար վիճակում, որպեսզի փորձությունների միջով անցնելով, կատարելագործվենք Քրիստոսում: Այդ նպատակի ըմբռնումը սովորեցնում է ինձ հասկանալ կյանքը և գիտակցել փորձությունների անհրաժեշտությունը, օգնում է՝ շարժվել առաջ դարձի ճանապարհին:

Ս.Կ. Նրանց, ովքեր իրենց կյանքի գլխավոր նպատակն են սահմանել կատարելության նվաճումը, սիրող Երկնային Հայրը այդպիսի կատարելության հրաշալի օրինակ է տվել՝ Հիսուս Քրիստոսին: Եվ Փրկչի բոլոր ճշմարիտ աշակերտների համար դարեր ի վեր հնչում է Նրա պատվիրանը. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27):

Կ.Ա. Պատասխանելով ձեր հարցին կցանկանայի երկու մեջբերումներ անել: Մեկը պատկանում է երեց Ռիչարդ Սքոտին. «Ձեր երջանկությունն այսօր և հավերժությունում պայմանավորված է ձեր դարձի գալու աստիճանով, և այն փոփոխությունով, որ այն առաջացնում է ձեր կյանքում» («Լիարժեք դարձի գալը երջանկություն է բերում», *Լիահոնա,* հուլիս 2002թ.): Երկրորդը՝ երեց Մերիոն Ջ. Ռոմնիի խոսքերն են. «Ճշմարիտ ու լիարժեք դարձի եկած մարդու մեջ ցանկությունները, որ հակասում են Հիսուս Քրիստոսի ավետարանին, մահանում են» *Լիահոնա,* հուլիս 2002թ.): Մեզանից յուրաքանչյուրի վրա պատասխանատվություն է ընկած՝ մշտապես աշխատել մեր դարձի գալու ուղղությամբ: Ըստ էության, դարձի գալն իրենից ներկայացնում է խառնուրդ՝ հավատքի, ապաշխարության և հնազանդության, որը դրսևորվում է մեր գործողություններում և որոշումներում:

Խմբագրություն. «Վարդապետություն և Ուխտեր» գրքում ասվում է. «Եվ ով որ չի կամենում ինձ համար վայր դնել իր կյանքը, իմ աշակերտը չէ» (ՎևՈւ 103.28): Ի՞նչ է սա նշանակում անձամբ ձեր համար:

Ե.Մ. Հիսուս Քրիստոսն իր կյանքը տվեց մարդկանց համար, և նրա այդ արարքը բացատրում է, թե ինչ է նշանակում նրա մաքուր սերը մեր նկատմամբ: Նրա զոհաբերությունը՝ Նրա ողորմածության դրսևորումն է: Դա Քրիստոսին բնորոշ հատկանիշ է, հենց այն՝ ինչը մենք փորձում ենք զարգացնել մեր մեջ: Այսպիսով, մեր զոհողությունները մյուսների համար, մեզ մոտ զարգացող ողորմածության հետևանք են: Այնպես որ, եթե մենք զոհաբերում ենք, ապա տալիս ենք մեզ Նրան և ավելի ենք նմանվում Նրան:

Ռուսլան Խիլոբոկ (Ֆյոդորովկա). Տաճարում ես ավելի խորը հասկացողություն ունեցա այս հարցի վերաբերյալ: Որպեսզի պատրաստ լինենք տալու մեր կյանքը, սկզբից պետք է տալ այն ամենն, ինչ մենք ունենք՝ Նրան ծառայելու համար, որից հետո՝ նաև մեր անձը, եթե Նա ցանկանա: Բ. Ջոն Գալբրայտը, Կիևի տաճարի առաջին նախագահը, տաճարի անձնակազմին ուսուցանելիս մի օր ասաց. «Մենք պետք է նախօրոք մի հարց որոշենք մեր համար. արդյոք ես պատրաստ եմ զոհվել Նրա համար, ում հավատում եմ՝ Հիսուս Քրիստոսի համար: Եվ այդ որոշումը հարկավոր է ընդունել՝ մանրակրկիտ մտածելուց հետո: Այդպիսի որոշումները չեն ծնվում մի ակնթարթում»: Հովհաննեսի Ավետարանում ԺԵ.13–15 Հիսուսն Իրեն ճշմարիտ հավատացողներին բարեկամներ է կոչել, ակնարկելով ամենամեծ զոհողության մասին, որ հնարավոր է մարդու համար, այսինքն՝ սեփական կյանքը տալու: Եթե մենք, ապրելով երկրում, կատարում ենք փոքրիկ սխրանքներ անձնուրաց ծառայությամբ, Ավետարանը քարոզելով, մեր ունեցվածքից զոհաբերելով և ուրիշ նման բարի գործերով, ուրեմն, մենք սրտանց տալիս ենք մեզ Աստծուն:

Ռուսլան Խիլոբոկ

Խմբագրություն. «Ի՞նչ ցուցանիշներով կարելի է որոշել, թե արդյոք մենք հոգևոր աճ ունենք, թե կանգնած ենք տեղում

Ս.Կ. *Սուրբ Գրությունների Ողեցույցում* տրված «կատարյալ» բառի սահմանումներից մեկը հետևյալն է՝ «զարգացման գագաթնակետին հասած»: Պետք է հասկանալ, որ մեզ մոտ չի ստացվի հասնել այդ կետին երկրային կյանքում, բայց մենք կարող ենք ամուր հիմք դնել:

Ռ.Խ. Առաջինն, ինչը կարող է օգնել՝ դա երկարաժամկետ նպատակներ դնելն է: Երբ որ մենք դրանց հասնում ենք, պետք է ծրագրել հաջորդները: Երկրորդը՝ որոշակի հաջողությունների հասնելիս, հարկավոր է շարունակել քրտնաջան աշխատանքը, որպեսզի պահպանել այն, ինչն արդեն ունես և, հնարավորության դեպքում, փորձել՝ ավելացնել:

Ե.Մ. Ամենապարզ ցուցանիշներից մեկը, որով կարելի է իմանալ, թե արդյոք մենք աճում ենք՝ դա հասարակ պարտականություններին հետևողական լինելն է, ինչպիսիք են. սուրբ գրությունների ընթերցանությունը, աղոթքը, կիրակնօրյա ժողովների հաճախումը: Երկրորդ ցուցանիշը՝ պատվիրանները կատարելու անկեղծ ցանկության առկայությունն է, ավելի շատ գիտելիք ու իմաստություն փնտրելու ցանկությունը և Նրա կամքը հասկանալու ձգտումը: Երրորդ ցուցանիշը՝ Երկնային Հոր հետ մտերիմ հարաբերություններ պահպանելու ձգտումն է, լսելու այն՝ ինչ Նա հուշում է մեզ Սուրբ Հոգու զորությամբ: Մեր հոգևոր աճը՝ Նրա նպատակի իրականացումն է. «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Կ.Ա. Սուրբ գրություններում շատ օրինակներ կան դեպի հավատք ճշմարիտ դարձի գալու, ինչպես նաև՝ նորադարձի շատ հատկանիշներ: Դրանցից մեկը՝ Բենիամին թագավորի ժողովուրդն է: Նրա կողմից ուսուցանվելու արդյունքում նրանք աղաղակեցին. «Այո՛, մենք հավատում ենք բոլոր խոսքերին, որոնք դու ասել ես մեզ. և նաև, մենք գիտենք դրանց հավաստիության և ճշմարտացիության մասին՝ Ամենակարող Տիրոջ Հոգու շնորհիվ, որը մեր մեջ կամ մեր սրտերում մի զորեղ փոփոխություն է առաջացրել, այնպես որ մենք այլևս հակված չենք գործելու չարիք, այլ շարունակ գործելու բարիք» (Մոսիա 5.2): Եթե մենք դարձի ենք եկել, ապա բարիք գործելու ցանկությունը դառնում է մեր կյանքի անբաժանելի մասը:

Խմբագրություն. «Կլոր սեղանի» շուրջ մեր զրույցը կցանկանայինք ավարտել նախագահ Կամենևի խոսքերով. «Մաքրությունն ու կատարելության ձգտումը՝ դա երկու թևեր են, որոնցով մարդը կարող է նվաճել հոգևոր բարձունքներ: Այդ թռիչքի ժամանակ կլինեն շատ դժվարություններ և փորձություններ, բայց այդ թռիչքը նաև շատ ուրախություն կբերի: Եվ միմիայն Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ այդ թռիչքը կարող է կայանալ, ինչի համար մենք Նրան անսահման երախտապարտ ենք: Նրա կատարյալ օրինակը ոգեշնչել էր և շարունակում է ոգեշնչել Նրա աշակերտներին՝ համարձակվել նման թռիչքի»:

Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր առաջին «կլոր սեղանի» մասնակիցներին և ցանկանում ենք նրանց, ինչպես նաև մեզ բոլորիս, հաջողակ լինել ճշմարիտ դարձի ճանապարհին: Ուղարկեք ձեզ հետաքրքրող թեմաները հաջորդ զրույցների համար հետևյալ էլեկտրոնային հասցեով. kharlamovamv@ldschurch.org ■

ARMENIAN